

2004թ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԸՆԹԱՑԸ ԸՆՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՂ  
ԽՈՐՀՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական հեղափոխության հետ մեկտեղ երկրներն անցում են կատարում դեպի գիտելիքների վրա հիմնված տնտեսությունները և տեղեկատվական հանրությունը: Որպես այդպիսին, էլ-գարգացման քաղաքականությունը դառնում է պետական քաղաքականության գլխավոր մասը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող կամ անցումային տնտեսություն ունեցող երկրների համար:

Վերջին տասնամյակում տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտը, մասնավորապես ծրագրային ապահովման և ծառայությունների բնագավառում, Հայաստանի տնտեսության արագ զարգացող ու խոստումնալից ճյուղերից է դարձել:

1990-ականների կեսերին, երբ հետզհետե ի հայտ եկան մասնավոր նոր ձեռնարկություններ, ոլորտի հետագա աճի համար նոր հեռանկարներ ուրվագծվեցին, որին նպաստեց նաև մի շարք արևմտյան ընկերությունների կողմից Հայաստանում հիմնած ծրագրավորման կենտրոնները: Հատկապես երբ 2000 թ. ՀՀ կառավարությունը տեղեկատվական ու հեռահաղորդակցության ոլորտը (ՏՀՏ) հայտարարեց Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը և դրան հաջորդեցին ՏՀՏ գլխավոր ռազմավարության և ՏՀՏ զարգացման ծրագրի մշակումը, որոնք խթանեցին հետագա զարգացմանը: Այս դրական քայլերին զուգահեռ ոլորտի զարգացման համար լուրջ խոչընդոտ է հանդիսանում հեռահաղորդակցության բնագավառի ոչ ազատականացված վիճակը:

1998-2004 թթ. հայկական ՏՏ ոլորտի միջին տարեկան աճը կազմել է 30%, և 2004 թ. այն հասել է 50 միլիոն ԱՄՆ դոլարի: Ոլորտի ողջ հասույթի մոտ երկու երրորդը պատկանում է արտասահմանյան մասնակցությամբ մոտ 25 ընկերությունների, ընդ որում նրանց մեծ մասը ամերիկյան ընկերություններ են, իսկ մյուսները՝ հիմնականում ռուսական և եվրոպական:

Հայկական ՏՏ ոլորտի ծառայություններն ու արտադրանքը արտահանվում է աշխարհի ավելի քան 20 երկրներ, ինչը վկայում է ոլորտի կազմավորման ու զարգացման միտումների մասին: Արտահանումների առավելագույն մասը՝ 68%-ը, առաքվում է ԱՄՆ և Կանադա, 16%-ը՝ Ռուսաստան ու ԱՊՀ երկրներ, իսկ Եվրոպա՝ 10%-ը: Տեղական շուկայի ծավալը կազմում է 18 մլն ԱՄՆ դոլար, արտահանումները՝ 32 մլն, ընդ որում երկու դեպքում էլ գերակշռում է ծառայությունների սեգմենտը: Տեղական շուկայում մեծամասամբ գործում են հայկական ընկերությունները, իսկ արտահանումների հիմնական մասը պատկանում է արտասահմանյան մասնաճյուղերին: Հարկ է նշել, որ հայկական շուկան տակավին փոքր է, թեպետ վերջին տարիներին գրանցվել է զգալի աճ: Ինչևէ, ակնկալվում է ոլորտի ավելի արագ աճ արձանագրել այն դեպքում, երբ գործարար շրջաններն ու կառավարությունը համոզվեն նրա իրական շահութաբերության, արդյունավետության մեջ ու նորաբաց հեռանկարներում:

ՏՏ ծառայություններ տրամադրող հայկական ընկերությունների արդյունավետությունը համեմատաբար բարձր է: Տեղական և արտասահմանյան մասնակցությամբ ընկերությունների արդյունավետության գործակիցը կազմում է ԱՄՆ ծառայությունների ոլորտի մակարդակի համապատասխանաբար 41% և 79%-ը: Տեղական ու արտասահմանյան ձեռնարկությունների ցուցանիշների տարբերության պատճառը նրանում է, որ տեղական ընկերությունները իրականացնում են ավելի ցածրարժեք ծառայություններ, բացի դրանից հայկական ապրանքանիշերը դեռևս ճանաչված ու հայտնի չեն ի

տարբերությունն արտասահմանյան ընկերությունների: Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների միջին արդյունավետությունը կազմում է ԱՄՆ մասնատիպ ձեռնարկությունների արդյունավետության 17%-ը:

1998-2004 թ.թ. ոլորտում գրանցվել է արդյունավետության ցուցանիշների աճ՝ հասնելով շուրջ 5-7%-ի: Այս արդյունքը հիմնականում գրանցվել է արտահանող ընկերությունների գործունեության շնորհիվ: Արտահանող ընկերությունների եկամուտներն ու սակագները ավելի բարձր են, ի տարբերություն այն ձեռնարկությունների, որոնք հիմնականում կենտրոնացած են տեղական շուկայի վրա և այդ իսկ պատճառով չունեն արդյունավետության աճի բարձր ցուցանիշներ:

2004 թ. SS ոլորտում գրադվածների թիվը հասել է մոտ 3,400-ի, ինչը համապատասխանում է շուրջ 25% աճի 1998-2004 թթ.: Կադրերը գրեթե հավասարապես են բաշխված տեղական և արտասահմանյան մասնակցությամբ ընկերությունների միջև: Ընդ որում նրանց մեծ մասը կենտրոնացած է SS ոլորտի ծառայությունների սեգմենտում: Փորձառու ծրագրավորողի միջին տարեկան աշխատավարձը տատանվում է 3,600-ից մինչև 7200 ԱՄՆ դոլար, իսկ խմբի կամ ծրագրի ղեկավարի վարձատրությունը՝ 6,000-ից 14,000 ԱՄՆ դոլար: Աշխատավարձի չափը կախված է նախ մասնագետի փորձից, այնուհետև այն հանգամանքից, թե գործատու ընկերությունը տեղական է թե արտասահմանյան: Նշված վարձատրություններն իրենց չափով չեն զիջում SS աուտոսոսիսիսի հիմնական երկրներին, ինչպես օրինակ Հնդկաստանն է, Ռուսաստանը, Իսրայելը, Իռլանդիան և Չինաստանը:

Հայաստանի 14 տարբեր ուսումնական հաստատությունների SS-ին առնչվող բնագավառներում սովորում է մոտ 4,000 ուսանող: Իսկ վերջին տասը տարիներին այս թիվը աճել է, քանզի SS ոլորտում երիտասարդ մասնագետների համար նոր հնարավորություններ ու հեռանկարներ են բացվել: Այնուամենայնիվ կրթության բնագավառի առկա սահմանափակ հնարավորությունները ոլորտի հետագա զարգացման հիմնական խոչընդոտներից են:

Կարևոր հանգամանք է ոլորտի զարգացման համար համաշխարհային խոշոր ընկերությունների մուտքը ՀՀ, այսօր արդեն Հայաստանում գործում են աշխարհում հայտնի Synopsys, Lycos ընկերությունները:

Ոլորտի ընդլայնման գործընթացի ժամանակ, որը տեղի է ունեցել 1998-2004 թվականներին, գրանցվել է ոլորտում աշխատողների թվի 25% աճ և արդյունավետության 5-ից 7% աճ, որի արդյունքում SS ոլորտի ընդհանուր աճը կազմել է 30%: Եթե ՀՀ կառավարությունը դոնոր կազմակերպությունների ու սփյուռքի հետ համատեղ իրականացնի նպաստավոր ու տեղին բարեփոխումներ, ապա աճի տեմպերը կշարունակվի և 2010 թվին ոլորտի հասույթը կկազմի 140 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ աշխատողների թիվը՝ 14,000 հոգի: Միաժամանակ, հայկական SS ոլորտը ի վիճակի է ընդհանուր հասույթի ծավալը հասցնել մինչև 400-500 միլիոն ԱՄՆ դոլար: Այնուհանդերձ, նման բարձր աճը՝ 40-50%, իրականանալի է միայն կադրերի թվի 30 - 35%, իսկ արդյունավետության 7-8% աճի դեպքում: Ոլորտի ներկայիս աճի բարձր ցուցանիշները պահպանելու ու առավել զարգացնելու նպատակով՝ ՀՀ կառավարությունը, կրթական համակարգն ու մասնավոր հատվածը պետք է լուրջ ջանքեր գործադրեն, միաժամանակ աջակցության անհրաժեշտություն կա դոնոր կազմակերպությունների ու սփյուռքի կողմից: Այսօր Հայաստանի Հանրապետությունում կան բազմաթիվ վարկային ծրագրեր որոնց ծրագրերի փաթեթում կան բազմաթիվ SS բաղադրիչներ, որոնք կարելի է հզորացնել և հստակեցնել: Օրինակ՝

1. Կրթության որակի և համապատասխանության ծրագիրը (գործող) Ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկը ներառում է ինտերնետային կապով հագեցած համակարգչային դասարանների ստեղծումը Հայաստանի դպրոցներում:
2. Դատախարակական բարեփոխումների ծրագիրը (գործող) Այս ծրագրի շրջանակներում, Արդարադատության նախարարությունը իրականացրել է

էլեկտրոնային ճանապարհով օրենսդրական տվյալների բազայի ստեղծման աշխատանքները:

3. Բնական պաշարների կառավարման և աղբատության հաղթահարման ծրագիրը (գործող) Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել և մեկնարկել GIS համակարգը: Արդեն ընտրվել է մեկ խորհրդատվական ըկներություն, որի կողմից պետք է իրականացվեն GIS իրականացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ դաշտի գնահատման աշխատանքները՝ նախագծման փուլում և ինստիտուցիոնալ վերապատրաստման հարցերը՝ իրականացման փուլում:
4. Հայաստանի Առողջապահության համակարգերի արդիականացման ծրագիրը (նախատեսվում է) Այս ծրագրի ներքո նախատեսվում է ներդնել Հայաստանի հիվանդանոցների և պոլիկլինիկաների կառավարման և հաշվապահական հաշվառման SS համակարգ: Բացի այդ, ծրագրում ներառված է նաև մշակել ազգային առողջապայական հաշիվների SS համակարգ Առողջապահության նախարարության ներսում:
5. Հայաստանի սոցիալական ապահովության համակարգի կառավարման ծրագիրը (նախատեսված է) Ծրագրում նախատեսված է մշակել ինտերնետային կապի ստեղծման ծրագիր Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության և Հայաստանի բոլոր մարզերում գործող սոցիալական ապահովության տեղական գրասենյակների միջև: Համակարգը հնարավորություն կտա կատարել «վեբ»-ի վրա հիմնված տեղեկատվության փոխանակում և սինխրոնացնել տվյալները զբաղվածության, կենսաթոշակների և այլ սոցիալական ապահովության վճարումների համակարգը Նախարարության և տարածքային գրասենյակների միջև:
6. Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը (նախատեսված է) Ծրագրում ներառված է մի բաղադրիչ, որը վերաբերում է վարձավճարների հաշիվների համակարգի ավտոմատացմանը:
7. Հանրային հատվածի արդիականացման ծրագիրը (նախատեսված է) Ծրագիրը ներառում է երեք SS բաղադրիչներ. (ա) մարդկային ռեսուրսների կառավարման համար կառավարության ողջ համակարգում տեղեկատվական համակարգի ներդրումը: Այս տեղեկատվական համակարգը հնարավորություն կտա մոնիտորինգի ենթարկել Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից կառավարության պաշտոններում համալրվելու գործընթացը բոլոր մակարդակներում և Հայաստանի բոլոր մարզերում, այս գործընթացի յուրաքանչյուր փուլում, դրանով իսկ ապահովելով գործընթացի թափանցիկությունը:
8. Գյուղական տնտեսության համակարգի արդիականացումը ծրագիրը (նախատեսված է): Ծրագիրը ներկայումս գտնվում է մշակման իր վաղ փուլում և կարող է պոտենցիալ առումներով աջակցել գյուղական տարածքների համար էլ-ծառայությունների ստեղծման, օրինակ հեռակենտրոնների ստեղծման հարցում:
9. Արտասահմանյան ներդրումների և արտահանումների խթանման Վարկ / LIL/ (գործուն) Ծրագիրը իր հիմնական ուշադրությունը բևեռում է Չարգացման Հայկական Գործակալության կարողությունները բարելավելու վրա: Սկզբում, այն ուներ էլ-գարգացման բաղադրիչ «մեկ կանգառում անհրաժեշտ գործարքների բարձրորակ իրագործման համար»: Սակայն այն հանվեց, քանի որ չէր բավարարում LIL-ի պահանջներին: Մնացել է միայն «Վեբ» կայքի հարցը, որը կատարվել է MIGA-ի աջակցությամբ:
10. Չեռնարկությունների ինկուբատորի ծրագիրը (գործող) Ծրագիրն աջակցում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հմտությունների զարգացման ծառայությունների, բիզնես կապերի ստեղծման հարցում, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր կամ գործող ընկերությունների համար կառավարելի տարածք տրամադրելու հարցում:

11. Աղքատության հաղթահարման աջակցության վարկը (նախատեսված է) սահմանում է որոշ միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն Հայաստանում էլ-ծառայությունների ներդրումը խթանելու համար: Այստեղ առաջարկվում է ընդունել օրենք էլեկտրոնային փաստաթղթերի և ստորագրության մասին, առաջարկվում է փորձնական ծրագիր «վեբ» -ի միջոցով համայնքներին գործարարության մասին էլ-ծառայություններ տրամադրելու մասին:

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր վերոհիշյալ ՏՀՏ բաղադրիչները զգալիորեն կուժեղանան այն դեպքում, եթե ՀՀ կառավարությունը ձեռնարկի հետագա քայլեր էլ-կառավարման կառուցվածքի նախագծման և իրականացման ուղղությամբ:

2001թ-ին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդը, որը ՀՀ վարչապետի նախագահությամբ, ակտիվ մասնակցություն է ունեցել ոլորտի խթանման գործում՝ հնարավորություն ընձեռելով համախմբել ՏՀՏ ոլորտի հիմնական մասնակիցներին, ինչպես նաև ակտիվ երկխոսության հնարավորություն ստեղծելով տեղական գործարարների, սփյուռքի և պետական մարմինների միջև: Խորհրդի առկայությունը հզոր աջակցություն է ՏՏ ոլորտի ընկերություններին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏԶԱԽ) 2004թ. աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհուրդը հիմնականում իրականացրել է իր գործունեությունը կանոնադրությամբ՝ իրեն վերապահված գործառույթների և խնդիրների համապատասխան:

ՏՏԶԱԽ-ը 2004թ-ին գումարել է թվով երեք նիստ, կայացրել է ակումբի երեք և բազմաթիվ աշխատանքային խմբերի հանդիպումներ:

Ստորև ներկայացնում ենք Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի և քարտուղարության կողմից նախորդ հաշվետվությունից հետո իրականացված գործունեության խրոնոլոգիան.

Ժնևում կայացած տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովից հետո նախնական պայմանավորվածություն էր ձեռք բերվել հանդիպելու ՀՀ Նախագահի հետ քննարկելու համար ՏՏ ոլորտի հիմնախնդիրները: Հունվարի 9-21 Քարտուղարությունը կազմակերպել է Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անդամների միջև տեղի են նախնական 4 հանդիպումներ, որոնց ընթացքում ձևավորվել է փաստաթուղթ, որն էլ հետագայում ներկայացվել է ՀՀ Նախագահին: Փաստաթղթում արվել է ՏՏ ոլորտի համեմատական վերլուծություն և ներկայացրել է ոլորտի հրատապ խնդիրները, իսկ հունվարի 23-ին տեղի ունեցավ հանդիպումը ՀՀ Նախագահի հետ՝ Խորհրդի մասնավոր հատվածի ներկայացուցիչների և Խորհրդի քարտուղարի մասնակցությամբ:

Հունվարի 30-ին տեղի է ունեցել ՏՏԶԱԽ-ին կից Իրավակարգավորման և հեռահաղորդակցական հարցերով աշխատանքային խմբերի համատեղ նիստը, որտեղ քննարկվեցին CIT, Aviainfotel և Arminco ընկերությունների կողմից բարձրացված հարցերը:

Փետրվարի 18-ին Քարտուղարությանը մասնակցել է Բաց հասարակության ֆինանսավորմամբ ստեղծված [www.gallery.am](http://www.gallery.am) էլեկտրոնային կայքի շնորհանդեսին:

Փետրվարի 20-ին տեղի է ունեցել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 14-րդ նիստը, որի օրակարգում ընգրկված էին հետևյալ հարցերը.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող Խորհրդի 2002 թվականի հոկտեմբերից հետո իրականացված գործունեության մասին հաշվետվություն
2. Ժնևում կայացած Տեղեկատվական Հասարակության համաշխարհային գագաթաժողովում (ՏՀՀԳ) բարձրացված և ՀՀ Նախագահի մոտ կայացած հանդիպման ընթացքում քննարկված հարցերի և ապագա անելիքների մասին

3. ՀՀ Հեռահաղորդակցության տեխնիկական ապահովման ծառայությունների մատուցման կարգի մեկնաբանության վերաբերյալ, «Ավիահինֆոտել» ընկերության կողմից ներկայացված բողոք-դիմում

4. Խորհրդի չորրորդ ռոտացիայի հաստատում

Մարտի 1-15 Քարտուղարությունը մասնակցեց PRO SME կողմից Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամի հետ համատեղ կազմակերպված CeBIT 2004 ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքներին: Մասնավորապես մշակվել է 4 ընկերությունների համառոտ նկարագրությունների կորպորատիվ դիզայնը, որը ներգրավվել է ՏՏՁԱԽ ներկայացուցչական փաթեթում: Փետրվարի 9-20-ը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության փորձագետները հերթական այցով ժամանեցին Հայաստան: Քարտուղարության հետ համատեղ մի շարք քննարկումներ տեղի ունեցան մշակելու 2004թ. համար նախատեսված համատեղ աշխատանքները:

Մարտի 9-ին տեղի է ունեցել ՏՏՁԱԽ Գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի նիստը, որտեղ օրակարգում քննարկվել է Գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի հետագա աշխատանքային ծրագրերը:

Մարտի 26-ին անց է կացվել ՏՏՁԱԽ Գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի նիստը, որտեղ քննարկվել է ՀՀ գիտության և կրթության նախարարության կողմից ներկայացված «Կրթակարգը» և «Վիսաֆեր» տեխնոլոգիայի կողմից ներկայացված «Բարձր տեխնոլոգիական գոտիների մասին օրենքի նախագիծը»:

Մարտի 17-25 Քարտուղարության աշխատակիցները մասնակցեցին Հանովերում կայացած CeBIT 2004 ցուցահանդեսին, որտեղ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի կողմից ձևավորված տաղավարում ներկայացվեց Հայաստանի Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունները և նրանց ձեռքբերումները: Համատեղ աշխատանքների արդյունքում ձեռք բերվեցին բազմաթիվ գործարար կապեր, որոնցից շատերը տեղական ընկերությունների համար վերածվել են համագործակցության:

Մարտի 29-ին տեղի է ունեցել Իրավակարգավորման և հեռահաղորդակցական հարցերով աշխատանքային խմբերի համատեղ նիստը, որտեղ քննարկվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից մշակված «Հեռահաղորդակցության ոլորտի հայեցակարգը»:

Ապրիլի 5-ից սկսվեցին ՏՏՁԱԽ-ին կից չորս աշխատանքային խմբերում գործունեության ծրագրերի մշակումներն ու քննարկումները, հետագայում Խորհրդի նիստում ներկայացվելու նպատակով: Այդ հարցով ապրիլի 13-ին տեղի ունեցավ Միջազգային և Դոնոր Կազմակերպությունների Համակարգման աշխատանքային խմբի նիստը:

Ապրիլի 26-ին Քարտուղարության կողմից կազմակերպվեց և անցկացվեց ՏՏՁԱԽ Ակումբի նիստը, որի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Հնդկաստանի Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով փոխնախարար Ս. Լաքշմինարայանայի այցը,

2. ՏՏՁԱԽ 2004թ. գործունեության ծրագրի նախագծի քննարկում:

Մայիս 3-7-ը քարտուղարությունը ընդունմանեց Համաշխարհային Բանկի էլեկտրոնային զարգացման փորձագետների խմբի անդամներին և կազմակերպեց հանդիպումներ ՀՀ կառավարության մարմինների ներկայացուցիչների հետ: Այցի շրջանակներում անցկացվեց նաև Համաշխարհային Բանկի խարհրդականների, մի քանի երկրների մասնագետների և ՀՀ նախարարությունների ու շահագրգիռ կազմագերպությունների մասնակցությամբ սեմինար-վիդեոկոնֆերանս նվիրված տեղեկատվական տեխնոլոգիաներ ոլորտը կորդինացնող հնարավոր գործադիր մարմնի ստեղծմանը, նրա կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների հնարավոր ուղղությունների քննարկմանը:

Մայիսի 6-ին տեղի է ունեցել Իրավակարգավորման հարցերով աշխատանքային խմբի նիստ, որտեղ քննարկվել է «CIT» ընկերության կողմից ներկայացված դիմում-առաջարկը համակարգչային սարքավորումների ներմուծման վերաբերյալ:

Մայիսի 17-ից 20-ը Գիտակրթական հարցերով աշխատանքային խումբը կազմակերպել և անց է կացրել ուսումնական սեմինար կրթության բնագավառի ներկայացուցիչների համար.

«Մասնագիտական գործունեության մեջ տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման բնագավառում որակավորման բարձրացում» վերնագրով:

Մայիսի 20-ին կայացել է Իրավակարգավորման հարցերով աշխատանքային խմբի նիստը, որի ընթացքում քննարկվել է «Վիսաֆեր» տեխնոլոգիայի կողմից ներկայացված ՀՀ օրենքի նախագիծը «Բարձր տեխնոլոգիական գոտու մասին»:

Հունիսի 2-ից Քարտուղարության կողմից ակտիվ աշխատանքներ են տարվում «Open Source Armenia» կազմակերպության հետ համատեղ ՏՏՁԱԽ էլեկտրոնային կայքի բովանդակության և կառուցվածքի մշակման ուղղությամբ:

Հունիսի 4-ին Քարտուղարության կողմից կազմակերպվեց և անցկացվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հերթական

15-րդ նիստը: Նիստի օրակարգում ընգրկված էին հետևյալ հարցերը.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող Խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին,
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող Խորհրդի 2004 թվականի գործունեության ծրագիր,
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համակարգումն առաջնորդող մարմնի ստեղծման մասին,
4. ՀՀ կապի և տեղեկատվայնացման հայեցակարգի մասին,
5. Ջրո տոկոս տոկոսադրույքով հարկման ենթակա ներմուծվող համակարգչային սարքավորումների սահմանին ԱԱՀ-ի գանձման խնդիրը,
6. Այլ հարցեր:

Հունիսի 8-ին Իրավակարգավորման հարցերով աշխատանքային խմբի շրջանակներում տեղի ունեցավ ՀՀ պետական կառավարման մարմինների միասնական էլեկտրոնային փաստաթղթաշարժի կազմակերպման նախագծի մասին քննարկում:

Հունիսի 11-ին կազմակերպվեց ՏՏՁԱԽ ակումբի նիստ հետևյալ օրակարգով՝

1. Ամերիկյան «Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի շուրջ խորհրդակցություն:
2. «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում:

Հունիսի 14-ին կազմակերպվել է ընթացիկ աշխատանքային հանդիպում ՄակՔենզի ընկերության փորձագետի հետ, որն իրականացնում էր այդ ընկերության փորձագետների կողմից նախորդ տարում անցկացված հետազոտության թարմացումը ընթացիկ տարվա կտրվածքով:

Հունիսի 15-ին Իրավակարգավորման և հեռահաղորդակցական հարցերով աշխատանքային խմբերի համատեղ նիստը որտեղ քննարկվեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ներկայացված՝ «ՀՀ պետական կառավարման մարմինների միասնական էլեկտրոնային փաստաթղթաշարժի կազմակերպման նախագծի մասին» փաստաթղթի վերջնական քննարկումը:

Հունիսի 18-ին ՏՏ Քարտուղարության կողմից կազմակերպվեց Ինտերնյուս հասարակական կազմակերպության կողմից մշակված սեմինարը՝ «ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների օրենսդրությունը և համապատասխան եվրոպական ստանդարտները» թեմայով:

Հունիսի 28-ից 30-ը Քարտուղարությունը մասնակցել է «Օփենսորս Եվրոպական տարածաշրջանային համաժողովին» և դրա շրջանակներում անցկացվող քննարկումներին:

Քարտուղարության աշխատակիցները հուլիսի 8-ից դասընթացների են մասնակցել՝ «Opensource Armenia» կազմակերպության կողմից ՏՏՁԱԽ էլեկտրոնային կայքի բովանդակության ձևավորման և պարբերական թարմացման ուղղությամբ: Կատարվել է ՏՏՁԱԽ էլեկտրոնային կառուցվածքի մշակում, բովանդակության ձևավորում, թարմացում անգլերեն լեզվով: Ինչպես նաև կայքի տեղեկատվության պարբերական թարմացում «Միջոցառումներ» և «Նորություններ» բաժիններում: Հուլիսի 26-27-ին քարտուղարությունը մասնակցել է Թբիլիսիում կայացած «Կովկասյան տարածաշրջանի տեղեկատվական

տեխնոլոգիաների ոլորտի օրենսդրության հարմոնիզացումը համապատասխան եվրոպական ստանդարտների հետ» սեմինարին: Օգոստոս ամսվա ընթացքում քարտուղարության կողմից հավաքագրվել են և ուղղարկվել են Խորհրդի անդամների և այլ շահագրգիռ կազմակերպությունների կողմից «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի ծրագրի շրջանակներում ներկայացված նախագծերը, վերջիններս հետագայում ուղղարկվել են ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն: Քարտուղարության կողմից Սեպտեմբերի 13-ին կազմակերպվել և անց է կացվել ՏՏՁԱԽ կից 4 աշխատանքային խմբերի համատեղ նիստ, որտեղ քննարկվել են «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի ծրագրի շրջանակներում ներկայացված նախագծերը: Սեպտեմբերի 28-ին կազմակերպվել է ՏՏՁԱԽ ակումբի նիստ, որի օրակարգում քննարկվել է Համաշխարհային Բանկի փորձագետների կողմից ներկայացված զեկույցը ՏՀՏ նոր մարմնի՝ Էլ. զարգացման գործակալություն ստեղծելու մասին: Ինչպես նաև կատարվել է քարտուղարության ընթացիկ նամակագրությունը համապատասխան կազմակերպությունների և գերատեսչությունների հետ: 2004թ. հոկտեմբերի 5-ին տեղի է ունեցել ՏՏՁԱԽ դոնոր և միջազգային կազմակերպությունների աշխատանքային խմբի նիստ, որի ընթացքում քննարկվել են Համաշխարհային Բանկի կողմից առաջարկվող ծրագրերի շրջանակներում նոր ՏՀՏ մարմնի ստեղծման վերաբերյալ հարցը և այդ աշխատանքային խմբի կողմից իրականացվող ՏՀՏ նախաձեռնությունների ցուցակի թարմացում: Տեղի է ունեցել նաև Իրավակարգավորման և Հեռահաղորդակցության հարցերով աշխատանքային խմբերի համատեղ նիստ, որի օրակարգում քննարկվել է Համաշխարհային Բանկի կողմից առաջարկվող ծրագրերի մասին նոր ՏՀՏ մարմնի ստեղծման վերաբերյալ հարցը:

Հոկտեմբերի 12-ին տեղի է ունեցել բարձր տեխնոլոգիական գոտիների մասին օրենքի նախագծի լրամշակված տարբերակի քննարկումը:

Հոկտեմբերի 12-ին տեղի է ունեցել գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի նիստ, որի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը՝

1. Համաշխարհային բանկի կողմից ներկայացված զեկույցը ՏՀՏ նոր մարմնի՝ Էլ.- Չարգացման գործակալության ստեղծելու առաջարկ:

2. «Կրթական ծրագրերի կենտրոնի» կողմից բարձրացված խնդիրների քննարկում:

Հոկտեմբերի 20-ին քարտուղարությունը կազմակերպել է Համաշխարհային Բանկում Էլ. զարգացման ծառայությունների թեմատիկ խմբի վիդեոկոնֆերանս-հանդիպում: Հանդիպման թեման էր՝ «Էլ. Չարգացման պահպանում. ազգային ՏՀՏ ռազմավարության իրագործում»:

Նոյեմբերի 4 – 6 տեղի ունեցավ ԻՆՖՈՏԵԿ 2004 ցուցահանդեսը և նրա շրջանակներում կայացած «ՏՏ-ն կորպորատիվ ընկերությունների համար» գործարար համաժողովը, որին մասնակցեց նաև ՏՏՁԱԽ քարտուղարությունը: Համաժողովի շրջանակներում, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աջակցությամբ, «կլոր սեղաններին» հրավիրված էին մասնակցելու նաև արդյունաբերական ոլորտի ներկայացուցիչները: Քննարկումների արդյունքում հնարավոր եղավ ծանոթանալ տեղական արտադրողների պահանջներին ուղղված ՏՏ բնագավառին:

Նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ ՏՏՁԱ Խորհրդի հերթական XVI նիստը, որի օրակարգը հետևյալն էր՝

1. ՏՏՁԱԽ նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին
2. «ԱրմենՏել» ՀՉ փակ բաժնետիրական ընկերության թիվ 60 Լիցենզիայի վերախմբագրված և լրացված տարբերակը հաստատելու մասին
3. Համաշխարհային գազաթափող մրցանակաբաշխության շրջանակներում Էլ. բովանդակության համահայկական մրցույթի կազմակերպման մասին
4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համակարգումն առաջնորդող մարմնի ստեղծման մասին
5. Այլ հարցեր

Նոյեմբերի 16-ին տեղի ունեցավ քննարկում էլ-կառավարում թեմայով, որը կազմակերպվել էր Ջարգացման հայկական գործակալության և Էստոնիայի էլ-կառավարման ակադեմիայի կողմից:

Նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ իրավակարգավորման և հեռահաղորդակցության հարցերով աշխատանքային խմբի համատեղ նիստ, որի օրակարգում «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի նոյեմբերի 20-ի N 694 որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի քննարկումն էր:

Դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի նիստը, որը նվիրված էր հայկական համակարգչային տառատեսակների և նրանց վերաբերող խնդիրներին քննարկմանը:

Դեկտեմբերի 22-ին քարտուղարությունը հեռահաղորդակցությամբ աշխատանքային խմբի հետ համատեղ քննարկեցին Հանրապետական ռադիոցանցը կատարելագործելու ծրագրի նախագիծը:

Ինչպես նաև կատարվել է Քարտուղարության ընթացիկ նամակագրությունը համապատասխան կազմակերպությունների և գերատեսչությունների հետ, ինչպես նաև ինտերնետային էջի պարբերական թարմացում:

Ինչպես դուք նկատեցիք ներկայացված խրոնոլոգիայից ամբողջ տարվա ընթացքում մենք հետևողականորեն անրադարձել ենք 2004թ գործունեության ծրագրում նախատեսված հարցերին և հատկապես կարևոր համարելով երկրի զարգացման և SS ոլորտում առաջընթաց ապահովելու ակնկալիքով հատուկ ուշադրության է արժանացել «Վիսաֆեր» տեխնոլոգիայի կողմից ներկայացված ՀՀ օրենքի նախագիծը «Բարձր տեխնոլոգիական գոտու մասին» և Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համակարգումն առաջնորդող մարմնի ստեղծման հարցը, որոնք քննարկվել են ամբողջ տարվա ընթացքում:

«Բարձր տեխնոլոգիական գոտու մասին» օրենքի նախագծի արվել են բազմաթիվ առաջարկներ, բայց համաձայնության չի կայացել ՀՀ կառավարության ֆինսկալ կառույցների՝ ՀՀ ֆինանսների նախարարության, Հարկային և մաքսային վարչությունների և մասնավոր ընկերությունների միջև:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համակարգումն առաջնորդող մարմնի ստեղծման հարցում ունենք բազմաթիվ ՀՀ նախարարությունների գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր ընկերությունների աջակցությունը: Խնդիրը կարևորվում է նրանով, որ այսօր ՀՀ-ում գոյություն ունեն տեղեկատվական հասարակության զարգացման համար էական խոչընդոտներ.

- Չափազանց թանկ հեռահաղորդակցության ծառայությունները՝ իրենց ընդհանուր ցածր որակով և թափանցելիությամբ,
- Իրավասությունների և գործունեության կրկնությունները էլ-զարգացման ոլորտում նախարարությունների միջև տարվող աշխատանքների թերի համակարգման պատճառով,
- Էլ-զարգացման և էլ-կառավարման ոլորտի կենտրոնական ղեկավարման և իրականացման կառույցների բացակայությունը,
- ՏՀՏ նվազ կիրառությունները և կարողությունները կառավարության մարմինների շրջանում և փոքր ու միջին ձեռնարկություններում (SMEs),
- Հանրային հատվածում ՏՀՏ ուղղությամբ կատարվող մասնատված և անարդյունավետ ներդրումները, որը սահմանափակված է ներդրումային գերակայությունների ծրագրի և ՏՀՏ ապրանքների և ծառայությունների գնման պետական ստանդարտների և ուղեցույցների բացակայությամբ,
- Հիմնականում ՓՄՁ-ներից կազմված ՏՀՏ արդյունաբերության ոլորտի առկայությունը, որտեղ բացակայում են ֆինանսավորման և մարքեթինգային աջակցության



կազմակերպչական կառուցվածքը, ինչպես նաև կառավարման և մարքեթինգային հմտությունները,

- ՏՀՏ արդյունաբերական ոլորտի մեկուսացված «անկլավային» զարգացումը, որը առանձնապես չի շահում երկրում ընդհանուր սոցիալական և տնտեսական զարգացման արդյունքներից,
- ՏՀՏ ոլորտում նվազ գրագիտությունը կառավարության և հասարակության լայն խավերի շրջանակներում,
- Տեղեկատվական և հաղորդակցության ենթակառուցվածքների կենտրոնացումը քաղաքային շրջաններում,
- Բնակչության մեծ մասի համար ՏՀՏ ծառայությունների մատչելիության հանրային կիրառության կետերի բացակայությունը,
- Էլեկտրոնային գործարքների և է-ծառայությունների հնարավորությամբ ապահովելու համար անհրաժեշտ օրենսդրական և կարգավորման դաշտի բացակայությունը:

Այս սահմանափակումների վերացման կարևորագույն լուծումը համարվում է Հայաստանում էլ-զարգացման կազմակերպչական կառուցվածքի բարելավումը, որի նպատակը կլինի ուժեղացնել երկրում իրականացվող էլ-զարգացման ծրագրերի համակարգումը, մոնիտորինգը և իրականացումը: Այս խնդիրները պահանջում են հրատապ լուծումներ: Դա հնարավոր է իրականացնել, եթե կառավարությունում ստեղծվի համապատասխան մարմին, կամ գոյություն ունեցող որևէ գործադիր մարմնին տրվի համապատասխան իրավասություններ:

Ակնկալում ենք, որ առաջիկայում այդ հարցում ՀՀ կառավարությունը դրական քայլեր կձեռնարկի: